

ԵՐԵՎԱՆԻ ԴԱՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԴԻՆԱԼԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Էջեր հազարէն. Тифлисе, Редакция «Мелі».
Հասց. Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆ. օ. Ն. № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ամս. օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խ. րաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆ. օ. Ն. № 253.

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

ԲՈՒՄԱՆԻՅԱՆ ԹԻՒՆ

Բաղադրական տեսութիւն.—Ներքին ՏԵՍՈՒՄ
Թիւն. Փողբիկի նկատողութիւններ. Նամակ
Գանձակից. Նամակ Աստուածանից. Նամակ
Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒՄԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Գեր-
մանիայից. Արտաքին լուրեր.—ՀԱՅԱՍՏԱՆԻ
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Շարժէ-չարժի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒՄԻՒՆ

Վերջին շաբաթվայ ընթացքում եւրո-
պական քաղաքական շրջանները սկսեցին
անհանգիստ կերպով նայել դէպի Բալկա-
նեան թերակղզու գործերը: Բարսաները
յուզմունքի մէջ ընկան, արժէթղթերի մի
նշանաւոր մասը գինը ընկաւ. լուրեր տա-
րածվեցին եւրոպական նաւատորմիկների
տեղափոխութեան և աւստրիական զորա-
ւորների շարժման մասին դէպի Ալբանիա.
սակայն պետութիւնները մէկը միւսի յետե-
ւից շտապեցին հանգստացնել հասարակա-
կան կարծիքը և հաւաստիացումներ տալ,
որ եւրոպական խաղաղութիւնը չի խան-
գարվի: Այնու ամենայնիւ եւրոպացիներից
շատերը, որոնք ապրում են թիւրքիայի
մայրաքաղաքում և Բալկանեան թերա-
կղզու գանազան քաղաքներում երկիւղի
մէջ են և սկսել են հեռանալ թիւրքիայի
սահմաններից, մինչև որ կը վերականգնի
խաղաղութիւնը երկրի մէջ:

Շատ ծանր դրութիւնում մէջ է գտնւում Ի-
րան Բոլթարիան, որը շատ մեծ և էական
շահեր ունի Մակեդոնիայում և սակայն
ստիպված է օտուտ հանգիստեան դեր կա-
տարել այն եղելութիւնների վերաբերու-
թեամբ, որոնք կատարվում են նրա առաջ:
Ապստամբական շարժումների գործողները
և զոհողների զլխաւոր մասը բոլթարա-
կան ծագում ունեն և ձգտում են բոլթա-
րական ազգութեան զբօշակը բարձրացնել
իրանց ապրած երկիրներում: Նրանք սպա-
սում են, որ Բոլթարիայի ազատ եղբայրա-
կիցները նրանց օգնեն զենքով, փողով և

մարդկանցով: Բայց բոլթարական կառա-
վարութիւնը անկարող է ներգործական
դեր կատարել և մասնակցութիւն ունե-
նալ այդ գործում, որովհետև միջազգային
հանգամանքները աննպաստ են միջամտու-
թեան համար: և եթէ տեղի ունենայ
այդպիսի միջամտութիւն, այն ժամանակ
Բոլթարիան ստիպված պէտք է լինի միայ-
նակ կռուել թիւրքիայի հետ, իսկ դա կա-
րող է շատ տխուր և վատագուտ հետե-
ւանքներ ունենալ Բոլթարիայի համար:
Ինչպէս մի քանի տարի առաջ Յունաս-
տանը, այնպէս էլ այժմ Բոլթարիան իր
փոքրիկ զորքով կանգնած կը լինի Թիւր-
քիայի պատերազմական մեծ ոյժի առաջ
և շատ հաւանական է, որ կընկնի այդ
ոյժից, կորցնելով երկար ժամանակով իր
հեղինակութիւնը Բալկանեան թերակղ-
զում և թաղելով շատ տարիներով Մակե-
դոնիայի ընթերցողների կամ ազատութեան
հարցը:

Բոլթարական կառավարութիւնը մինչև
այժմ մի կերպ ձեռնպահ է մնացել. բայց
Մալթիյիում և ուրիշ տեղերում եղած կո-
տորածները և բռնութիւնները այնքան
փրփումունք և զայրույթ են առաջ բերել
Բոլթարիայում, որ բոլթարական կառավա-
րութիւնը իրան սկսել է զգալ շատ կրի-
տիկական վիճակի մէջ: Եւրոպական քաղա-
քագէտները խորհուրդ են տալիս Բոլթա-
րիային զգուշ լինել պատասխանատու քայ-
լերից և լուրջ վտանգներ չը բերել այդ
նորակազմ պետութեան գլխին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՄԻՒՆ

ՓՈՔՐԻՆ ԿԵՆՏՐՈՆԻՒՆՆԵՐ

Մայիսի 4-ին, կիրակի օր, նշանակված է
զբաղմունքային ընկերութեան գործունէու-
թեան առաջին տարեշրջանի հաշեւետութեան
ընդհանուր ժողովը, ուստի կուգանայինք ըն-
կերութեան անդամների ուղարկութիւնը դար-
ձնել մի քանի կարևոր կէտերի վրա՝ որոնց ա-

պիտի բացառապէս ընկերութիւններ. «այն, ինչու ես
չունեմ Զրդանեւու գործը բազմակիցներ,—այն
ժամանակ ես գիտէի, թէ բախտը ինձ հըր կը
տանէր», կամ «տուէք ինձ անյաղժ Զրդանեւու
ոյժը, և իմ կուրծքը կը զարդարվէր քաղա-
թեան փայլուն նշաններով արծաթէ և ոսկեայր
կամ... բայց թողնեմք այս երկար նամակները
և ցանկութիւնները:

Երկրորդ տեղը իր ժողովրդականութեամբ
բնութւում է իմացիկ վարդապետ Դաւանը. նա
ստացել է 879 ձայն, և, որ զարմանալին է, ոչ
մի ներկայացուցիչ նրան ձայն չէ տուել. այլ մեծ
մասամբ էլ միջամտել և Սուրմալուի գաւառի հայ
գիւղացիները և... իր ազգակիցները:

Երրորդ տեղն է բռնում Սուրմալու եպիսկո-
պոս Պարգեանը, որը ստացել է 707 ձայն,
մեծ մասամբ Երևանի նահանգի իր ձեռքով
ձեռնադրած քահանայներից և տիրացուներից:
Այլաբնականներից նրան ձայն են տուել մի
քանի հոգի միայն, և այն էլ Երևանի թեմական
դպրոցի հոգաբարձուները:

Տիրացու Նազարեան, Սեդ. Մանգինեան,
Երկրորդագործ ստացել են հաւասար ձայներ—
211, և երեքն էլ «ճարակով» պարտաւ չիկ:
Իրկատրապիսի բաժանորդներից:

200 ձայն է ստացել Մակար Զմիւնեան, և
ձայն տուողների մեծամասնութիւնը կազմում
են մեր եկեղեցիների երէցփոխները, այս և այն
հիմնարկութիւններում ծառայող գանձապա-
նիկ, հայուսակներ և այլն:

Համեմատաբար քիչ ձայն է ստացել Ալեք-
սանդր Մանթաշեան, ընդ ամենը 199 ձայն՝ մեծ
մասամբ էլ միջամտել միաբնակութեան անդամ-
ներից, Մայր Ժողովում ծառայողներից, այս և
այն աւերակ վանքերի վանահայրերից, և ապա
գալիս են զանազան նկարիչներ, ճարտարա-
պետներ և այլն:

Դիմում արժէր ընդհանուր ժողովում հարցեր
յարուցանել:

Ինչպէս լրագրական լուրերից իմացանք, ըն-
կերութիւնը առաջին տարեշրջանում ունեցաւ
գեֆիցիտ մօտ 5000 ռ., և որքան պարզվեց
այդ վնասը կողմնակի պատճառներից էր, ո-
րոնց հարթելը և հետաքննելը ընկերութեան
վարչութիւնը ոչ մի կերպ չէր կարողանալ,
այն է թաւորման վնասը վարձի մեծ գու-
մարը, որի մէջ մտնում էր նաև մի անգլի-
սաժին յօդուտ անտարբէրօր պ. Կրասովի
Գուցէ այդ վնասը չը լինէր, եթէ թաւորման
տեղերը յատկացնէին մեր զբաղմունքային ըն-
կերութեան շաբաթվայ մէջ գտնէ երկու օր և
մուտքի կողմից աջող ճանաչված օրեր. բայց
զբանք հաշիւներն են և չարժէ դրանց մասին
խօսելը անգամ Այժմ եկող սեզոնի համար
վարձված է նոյն թաւորման համարեա թէ նոյն
հին պայմաններով, շատ քիչ գանազանութեամբ,
ուրեմի կարելի է նախատեսել, որ եկող սե-
զոնին էլ լինելու է գեֆիցիտ: Բայց որտեղից
ծածկել այդ գեֆիցիտը—անա հարց—որը պէտք
է լինի վարչութեան ջանքերի կենտրոնը և
զլխաւոր մտածմունքների առարկան ընդհա-
նուր ժողովում:

Մշակ № 17-ի մէջ քննելով ժողովարա-
նում սիրողների ոյժերով արված ներկայա-
ցումների գործը, մենք առաջարկել էինք այդ
գործը միացնել զբաղմունքային ընկերութեան
հետ և մասնաւորապէս հաշուել էինք, թէ որքան
օգուտ կարող է գոյանալ յօդուտ ընկերու-
թեանը Եւ իրաւ, սիրողները, գումարելով
ընդհանուր ժողով մարտ ամսին՝ որոշել են
համարեա միաձայն միանալ զբաղմունքային
ընկերութեան հետ և այս բանը աջողեցնելու
համար ընտրել էին ներկայացուցիչներ բա-
նակցելու համար. բայց ընկերութեան վարչու-
թիւնը մինչև այժմ անյայտ պատճառներով չը
կամեցաւ ունենալ ժողովարանի սիրողների
ներկայացուցիչներ իր ձեռքին յիշել այս գրու-
թիւնը պարզեմք, անա թէ ինչ գուրա կը գա-
լնկերութեանը առաջարկում են մուտքի կէ-
տը վճարով—որքան որ լինի—ձրի գահիւն, լուա-
ւորութիւն, ձրի աշխատող սիրողներ, միակ

լիսկը ընթերցողի ունեւին է, որ կարող էր լի-
նել մշտական խմբի մի օրեւ անդամը, իսկ
վարչութիւնը ամենայն պատրաստակա՞նու-
թեամբ... Կրածարվում է այդ գործից... Ինչու
Որովհետև ամենայն հաւանականութեամբ այս
գործը նկատել են աւելի զգալի ազդեցութիւն
մեր վրայ, որի հարկաւոր է գնալ, խնդրել, չարձարել,
նոր ոյժեր գտնել, նոյն-իսկ ստեղծել, իսկ
այնտեղ Արտիստականում ծառայողները ու-
նեւինք ընկերութիւնը երկու անգամ վարձ տալով
զրեց ներկայացուցիչներ զբաղմունքների մասնակ-
ցութեամբ և ի հարկէ վնասվեց: Որտեղ է այս
հանգամանքներում լուրջ կամ, առաջարկում են
ամեն ինչ ձրի—չին ուղում օգտվել, իսկ միե-
նոյն տեղում վճարելով թէ վարձ և թէ դերա-
սաններին՝ զնում են ներկայացուցիչներ:

Կրկնում ենք, ընկերութիւնը ժողովարանի
ներկայացուցիչներից կարող էր բաւական շահ
ունենալ և զբաղմունքի գեֆիցիտի մի մասը
ծածկել:

Երկրորդ գործը, որին վարչութիւնը եռան-
գով չէ հետևել, դա Հաւաքարում պ. Վարդա-
մանի նորակառոյց թաւորման է: Այս թաւ-
որման, որքան գիտենք և տեսնել ենք, լինելու է
բաւական գեղեցիկ, միջակ գահիւնով, թաւոր-
նական բոլոր յարմարութիւններով: Ընկերու-
թիւնը այնքան զանազան, որ զուրա եկաւ
աւելի եռանդուն մի անհատ, պ. Արաքեան, և
վարձելով այդ թաւորման՝ այժմ իր կողմից
տալու է գեղեցիկաւորով զբաղմունքային ընկե-
րութեանը Ուրեմի կրկնում է պ. Կրասովի
օրինակը: մինչդեռ զբաղմունքային ընկերու-
թիւնը, իրեն հաստատութիւն և միջոցների
տէր, կարող էր ճանաչվել թաւորմանտիրոջ
կողմից աւելի վստահելի վճարող և գուցէ ա-
ւելի ձեռնառու պայմաններով վերցնէր և իր
կողմից ազատ օրերը ուրիշներին վարձով
տալ: Մի խօսքով, շահագործելով այդ թաւ-
որման՝ գոյացած օգուտներով իր գեֆիցիտի
մի մասն էլ կը ծածկէր: Միևնոյն ժամանակ

ամենից աւելի մեզ զարմացրեց՝ դա այժմ Գեր-
մանիայում ապրող, մայր Աթոռի միաբան Եզ-
նիկ վարդապետն է, որը ստացել է մի ձայն
միայն, և այդ մի հատիկ ձայնը նրան տուել է
մի վարդապետ, իսկ իրան, այդ վարդապետին,
մի ձայն են տուել: Եւ այդպէս՝ ժողովրդակա-
նութեան այս երկար սանդղակում այս երկու
վարդապետները ամենամեծ ժողովրդական են
Գուգարկութեան այսօրինակ հետեւանքի մասին
թող մտածէ հայ ընթերցողը:

Ձեք որ ասուած է «ձայն բազմաց—ձայն Աս-
տուծոյ»...

Մեզ հետ գրեթէ միաժամանակ «Потер-
бывшая Газета» լրագրող առաջարկել է
իր ընթերցողներին հետեւալ հարցը. ո՞վ են
ժամանակակից ռուսներից ամառ մեծ մար-
դիկ:

Այս հարցին արձագանք են տուել 1217 հոգի:
Ամենից շատ ձայն տրված է «մեր ժամա-
նակակիցներից ամենամեծի» գրաֆ Լ. Ն. Տօլ-
ստօյի համար՝ 977 ձայն: Անտօն Ն. Չեխով և
Մաքսիմ Գորկի ստացել են հաւասար ձայներ—
613, նկարիչ Ռէպին՝ 432 ձայն, դերանկան
Մենդելեւի՝ 429, դերասան Շախմատով՝ 314,
նկարիչ Վերեշչագին՝ 295, գիտնական Մեյնի-
կով՝ 281, պրոֆէսոր Պաւլով՝ 219, նկարիչ
Մակովսկի 196 ձայն:

Ոչ մի հոգեւորական, ոչ մի վարդապետ, նոյն-
իսկ հայր Թամար Սերգեւիչ չէ մտել այդ ցու-
ցակի մէջ:

Իսկ մեզնում. մեծ մարդկանց 90% հոգեւո-
րականներից են:

Ինչով տիրացու ազգ չենք...

Ստորագիտ

այդ թատրոնը կատարելապէս կը դառնար հայկական, մի տեսակ օջախ դրամատիկական ընկերութեան համար Առ ժամանակ կարելի էր անտեղ տեղադրել թատրոնական գրադարանը (որի ունենալը միանգամայն անհրաժեշտ է), զգեստների պահեստ, բացի դրանից ժողովրդական ներկայացումների կենտրոն և զեկա-վարող հանդիսանալը:

Արժէ որ դրամատիկական ընկերութիւնը ու-նենար մեծ և եռանդուն մասնակցութիւն ժո-ղովրդական ներկայացումների մէջ Կարելի է նախագուշակել, որ ապագան պատկանում է ժողովրդական ներկայացումներին, և մենք ստիպված ենք լինելու մեր բոլոր ներկայա-ցումները ժողովրդականացնելու, մասնաւոր դարձնելու ժողովրդի բոլոր խաւերին:

Անյուշ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Ապրիլի 23-ին

Ամսիս 12-ին դերասան պ. Յ. Արէլեան տուեց Աստրախանում մի հայկական երեկոյթ: Անցեալում ունեցած երեկոյթների հետ համե-մատած՝ այս անգամ իսկապէս ուշադրութեան արժանի էր:

Դանիելը զարդարված էր դէկորացիաներով, որոնք զանազան հայ տեղերի աւերակներ էին ներկայացնում: Կար մի հայկական վրան, որ-տեղ Թիֆլիսից հրաւիրված Ալլըք-Ջիւանին իր խմբով երգում և նուագում էր ժողովրդական երգեր, իսկ սրանց դիմացը մի փոքրիկ սե-ղանի մօտ կանգնած էր կինտոն, գինին և մօ-թալը առաջին, ժողովրդին շարունակ հրա-ւիրում էր իրան սեղանակից լինելու:

Կային քիօսկներ, որտեղ հայկական շորեր հագած օրիորդները ծախում էին Աշամանի պատկերները, պսոս-կարտեր կովկասեան տե-սարաններով և ծաղիկներ:

Իսկ մի աչքի ընկնող նորութիւն, որ կար աստրախանցիների համար՝ հայկական պարերն էին: Խմբական պարերից պարեցին «Յոյ Նա-զնըմ», «Եոյ-Յոյ», «Լէպո» և վերջը «Քիտո-օղլա», իսկ սօսիներէն—«Ազուլ-դարա», «Թան-գի» և «Շիւստուրի»:

Համերգական բաժինը անցաւ բաւարար: Շատ ուրախալի էր, որ Թէ երգեցողներից և Թէ նուագողներից բոլորն էլ հայկական եր-գեր և եղանակներ երգեցին և նուագեցին:

Շնորհակալութեան արժանի են մի քանի տիկիներ, օրիորդներ և պարոններ, որոնք ամեն կերպ օգնում էին երեկոյթ կազմողին:

Իսկ կիրակի, ամսիս 20-ին պ. Արէլեանը ձմերային թատրոնում տուեց մի ներկայա-ցում: Ողբերգի «Ոճրագործի ընտանիքը» տե-ղական օրիորդների հետ: Պ. Արէլեան Կորա-գոյի դերում ունեցաւ մեծ աշուղթիւն: Սի-րոդներից աչքի էր ընկնում իր մոտեցված խա-ղով մ. Մադանգորանցեան Ռօզալիայի դե-մով Ս. Տիկիկը թէպէս էլ տիրապետում հայե-րէն լեզուին, բայց իր անխոնջ աշխատանքի շնորհիւ կարողացաւ պարզեցնել դուրս գալ այդ դժուար դերից: Առաջին անգամն էր դուրս գալիս օր. Փանեան, բայց իր կենդանի խաղով էմմայի դերում ցոյց տուեց, որ կարող է լաւ սիրող համարվել Վատ չէին նաեւ պ. Յ. Սօ-լովեան Մօսկինսկիի դերում և օր. Նախի-դեան Ազառայի դերում: Ընդհանրապէս ան-սովոր վատ չէր:

Պ. Արէլեան արժանացաւ բոլոր ծափահա-րութիւնների և ստացաւ մի ընծայ: Թատրոնը բաւական լինէր էր:

Հանդիսատես

ՆԱՄԱԿ ԱՌԱՔԱՆԱԳԻՑ

Ապրիլի 25-ին

Ապրիլի 20-ին տեղական հայ թատերասէր-ները՝ պ. պ. Վ. Շահպարտեանի և Յ. Գաւանես-նի ղեկավարութեամբ՝ ներկայացրին ծխական զարդաների օգտին «Արմէն» անունով մի պիէտ: Աչքի առաջ ունենալով պիէտի զօռութիւնը, թատերասէրներից շատերի առաջին անգամ բեմ բարձրանալը, բեմի անյարմարութիւնները և այլն, ներկայացումը կարելի է ընդհանրա-պէս բաւարար համարել: Իրանց դերերում լաւ էին տ. տ. Շ. Դարբինեան, Վ. Դեմէնկո և օր. Շ. Տէր-Վաղարշեան: Նոյնպէս լաւ կա-տարեց Սեղէի բարդ դերը պ. Շ. Դեմիր-ճողեան:

Որքան գիտենք՝ այս պիէտը դեռ չէ ներ-կայացրված Թիֆլիսի և Բագուի բեմերի վրա: ցանկալի է տեսնել թէ այս պիէտը և թէ երի-տասարդ հեղինակի մի երկու այլ պիէտները մեծ քաղաքների բեմերի վրա, աւելի մեծ հասարակութեան և աւելի ձեռնհաս քննադատ-

ների առաջ, որ մեծապէս կը նպաստէր հեղի-նակի գրական առաջադիմութեանը: Մենք մեր կողմից այս կասեցը միայն, որ պիէտը, անկասկած, ունի բեմական թելթել անյարմարու-թիւններ. հոգեբանական շատ մօմենտներ կարող են վիճելի լինել, իսկ ընդհանրապէս գեղեցիկ լեզուն ամբողջ էլ դրամատիկական չէ: Բայց պիէտի հիմնական գաղափարը և տենդենցիան շատ ժամանակակից, համակրելի և լայն մարդասիրական է, և պիէտը յաճախ գէպ ժողովրդի համար օգտաւէտ և ոգեւորիչ ընթերցանութեան նիւթ է: Դանիելը համարեա լինէր էր հասարակութեանը: Նոյն պիէտը կրկն-վեց ապրիլի 23-ին Այս անգամ ներկայացումը ժողովրդական էր և մուտքի անշուն վճարի պատճառով մեծ բազմութիւն էր գրաւել աշ-խատաւոր դասից:

Մեր եկեղեցու երեցիկոյի պաշտօնավարու-թեան ժամանակը լրանում է շուտով: այդ պատճառով ամեն մի քահանայի ծուխ առան-ձին ժողովներում 6-ական պատգամաւոր է ընտրել լիազօրութիւն տալով, որ բոլոր 24 պատգամաւորները ժողով դուրսբերեն և նոր երեցիկոյ ընտրեն: Պէտք է նկատել, որ այստեղի երեցիկոյութիւնը խրատական պատմութիւն ունի: մէկը եկեղեցին կողջպետում և բանտ է նստում, միւսը խուսափում է հաշուետու-թիւնից և այդ նպատակով հաշուետուեանը թաքցնում է և կորած հոգակում, եկեղեցու վերանորոգութեան ժամանակ խուսափում է իր պարականութեանը: Երկուսն էլ կատարելոց և մտած մասին չէ խորում և այլն: Ներկայ երեցիկոյ պ. Ս. Մառնիջեանը այդպիսի բա-ներ չէ արել, ի հարկէ, այդքանը բաւական չէր, որ մենք նրան գովէինք, բայց նա, ընդ-հակառակը, եկեղեցապետական այրված խա-նութիւնը վերաշինել է գեղեցիկ կերպով, եկեղեցու անհրաժեշտ նորոգութիւնները շա-րունակում է, արթուն կերպով հսկում է եկե-ղեցու բարեկարգութեան վրա, նպաստում է երկու սեռի քառասուն խմբի գոյութեանը, իւրաքանչիւր տարի եկեղեցու դրամական հա-շիւը տպագրած բաժանում է հասարակութեանը և այլն: Այդ պատճառով շատ ցանկալի է, որ պ. Ս. Մառնիջեան միաձայն վերջնաբեր իր ներկայ պաշտօնում, եթէ, ի հարկէ, հաշիւները պարբերաբար մանրամասն քննած հաշուետեա-ների կողմից որեւէ դիտողութիւն չը լինի: Երեք տարի տալով պ. Մառնիջեան ընտրվել է, այսպէս ասած, խնամի և բարեկամ պատգա-մաւորների շրջանի փոքրիկ մեծամասնու-թեամբ: Այդպիսի ընտրութիւնը, անկասկած, ցանկալի և համակրելի չէ: Մենք համոզված ենք, որ նրա նախկին հակառակորդները, որոն-ցից շատերը հիմա էլ պատգամաւոր են ընտրված՝ պ. Մառնիջեանի գործունէութիւնը հաճելի սկզբովից կը համարեն և ներկայումս նրան կրկին կընտրեն երեցիկոյ, մասնաւոր-որ կատարելու կարեւոր գործի: Դեռ շատ կան: Առաջ նրանք յանուն գործի հակառակ էին պ. Մառնիջեանի ընտրութեանը, իսկ ներկայումս յանուն նոյն գործի պէտք է նրան ընտրեն՝ նրա երեք տարվայ պաշտօնավարութիւնը աչքի առաջ ունենալով և արդարացի կերպով գնահատելով:

Սալիւսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

Երեկ, մայիսի 2-ին, Թիֆլիսի դատաստ-նական պալատում քննվում էր մեր ընթեր-ցողներից յայտնի Ախալցխայի եկեղեցական կալուածների գործը: Մենք կը հաղորդենք ա-ւելի մանրամասն տեղեկութիւններ: Այժմ կա-րող ենք յայտնել, որ պալատը, լսելով գործը իր բոլոր պատճառարանութիւններով վերջ-նական վճիռ կայացրեց՝ ձանաչել այն կալուած-ները իրեն սեփականութիւն Ախալցխայի Սուրբ Փրկիչ եկեղեցու: Հայոց հոգեւոր վարչութեան կողմից գործը պաշտպանում էր երգուեայ հա-ւատարմատար Սոկրատէս Մելիք-Ազաւանց:

Երեկ, ուրբաթ, մայիսի 2-ին, երեկոյեան ժամի 6-ին, յանկարծակի վախճանվեց Թիֆլիսի վրաց ազնուականութեան նախկին պարագլուխ և կալուածատէր, Լորիս Մեծնութեան եղբը՝ մէյնտէր իշխան Կոստանտին Իվանովիչ Բագ-րատիօն-Մուխրանսկի:

«Մշակի» մէջ իր ժամանակին հաղորդված էր, որ Բագրատի «Նոնթը» վէպը տպվում է վրաց «Մօսմբէ» ամսագրում, թարգմանու-թեամբ պ. Գ. Նաւագուլեանցի: Այդ գրութեանը ամբողջապէս տպվեց յիշեալ ամսագրի մի քա-նի համարներում և առանձին գրքով էլ հրա-

տարակվեց: Այժմ վրաց «Միօրիս Փորցէլի» լրագրի պատկերազարդ յաւելածով մէջ տպ-ված է նոյն Գ. Նաւագուլեանցի թարգմանու-թեամբ Ռ. Պատկանեանցի «Արաքսի Արտա-սունքը» բանաստեղծութիւնը:

«Արարատի» մէջ կարդում ենք. «Վեհափառ Հայրապետ տեղեկանալով, որ ապրիլի 20-ին, Ախալցխայում կիրակի օրը, քահանայապե-տութեան օծումն պէտք է ընդունէ Սուրբ Կի-րիկոյ նորընտիր Կաթողիկոս Տ. Սահակ, բա-րենաճեց հեռագրաւ պատուիրել Կեսարիոյ ա-ռաջնորդ Տ. Տրդատ եպիսկոպոսին, որ շտապէ մասնակցելու ս. Օծման հանդիսին, իբրև ներ-կայացուցիչ իր կողմից: Նոյն անօրինութիւնը հեռագրով յայտնվեց Կ. Պօլսոյ ամեն. Պատ-րիարքին, որպէս զի հարկաւոր դիւրութիւն-ներն ընծայվին հայրապետական գերապատիւ ներկայացուցչին՝ իրեն եղած յանձնարարու-թիւնն ըստ արժանւոյն գրելու հանելու համար»:

Թիֆլիսի նահանգապետ առաջարկեց Թիֆ-լիսի ոստիկանապետին օրինական պատուխա-նատութեան ենթարկել աղիւսի գործարան-ների այն տէրերին, որոնց գործարանները գտնվում են Վերայի հայոց գերեզմանատան մօտ և որոնք սրբապետութիւն են գործում՝ քանդելով մեծածնների գերեզմանները և ցրել տալով նրանց ոսկորները:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իր վեր-ջին նիստում, ի միջի այլոց, որոշեց վերանո-րոգել Պուշկինի արձանը՝ որ գտնվում է նոյն անունը կրող քաղաքային այգում, և տալ վե-րանորոգութեան կարևոր ծախքը:

Լրագիրների խօսքով՝ ժողովրդական լուսա-ւորութեան միջնորդութիւնը քաղաքեցի, որ հրէաները չեն կարող համալսարանի ազատ ունկնդիրների թւում ընդունվել:

Տիկին Մ. Ն. Մակարեանի ժառանգները մօտ օրերումս յանձնեցին Թիֆլիսի Հայուհեաց Բա-րեգործական ընկերութեան 1000 ռուբլի ան-պաշտանով, որ այդ գումարը մնայ իրեն ան-ձնամիտի զբոսաշրջութիւն, իսկ նրա տոկոսնե-րով մի հայ շուտաւար աղջիկ կրթութիւն ստա-նայ ընկերութեան կար ու ձևի դպրոցում:

«Тифл. Листок» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, որ Ֆինլանդիայի միջնորդու-թիւնը, անուղղակի հորիկերի գէպարտաձէն-տի կառավարչի օգնական Նովիցկի գեկու-ցումը քննելուց յետոյ, որոշեց խմբիցիւնի արձույնի մենավաճառը չը մտցնել առ այժմ Անդրկովկասում և յետագայ այդ հարցի որո-շումը անորոշ ժամանակով:

Այսօր, մայիսի 3-ին, Թիֆլիսի «Արտիստի-կական թատրոնում» տեղի կունենայ մի ներ-կայացում յօգուտ Թիֆլիսի գիշերային ապաս-տարանում գիշերողների՝ նրանց կերակուրը բարձրելու նպատակով: Կը խաղաղվի «Քին» պիեսը Նկատի առնելով ներկայացման հա-մակրելի նպատակը՝ ցանկալի է, որ հասարա-կութիւնը արձագանք տայ ներկայացում կազ-մակերպողների բարի ցանկութեան:

Ներկայումս Թիֆլիսում ներկայացումներ է տալիս մալթոսների գերասանական խումբը, Նազիլիլիի ղեկավարութեամբ: Նա առեւել է արդէն երեք ներկայացում և այսօր պէտք է տայ «Բօշա Աղա», որը կը լինի և վերջինը:

Ֆինլանդիայի միջնորդութեան ուսումնա-րանների շրջանային տեսուչ Ֆիլիք, յանձնա-րարութիւն ստանալով միջնորդութիւնից ներ-կայ լինելու. Բրաունշվեյգի միջազգային հա-մաժողովին, որի նպատակն է քննել առևտրա-կան կրթութեան վերաբերեալ հարցեր՝ մօտ օրերումս մեկնեց Թիֆլիսից գէպի Բրաուն-շվեյգ:

Քաղաքային վարչութիւնը որոշեց մերժել վրաց թեմական ուսումնարանական խորհրդի միջնորդութիւնը՝ տարեկան 3,500 ռուբլի նշա-նակելու քաղաքային միջնորդներից որպէս նպաստ վրաց եկեղեցական-ծխական ուսումնարաննե-րին:

Մեզ խնդրում են հաղորդել, որ կիրակի, ամսիս 4-ին, Աւստրիան փողոցի ժողովրդա-կան ընթերցանութեան դահլիճում կը տրուի

հանրամատչելի մանկական ներկայացում Խա-ղում են «Կախարդված պրինց» և դաւեչա:

Մի պարոն, որ գտնվում է հիւանդ և անա-պահով վիճակի մէջ, շուշեցի Անդրէաս Աղլեան, յոյսը դրել է բարերարների օգնութեան վրա: Այն անձինք, որոնք կը ցանկանան որեւէ նպատ տալ յիշեալ պարոնին՝ կարող են դի-մել Թիֆլիս Գօգրեվիկայա փողոց № 10, որ-տեղ նա կենում է:

Յայտնի ուսու վրապորդ Ա. Պ. Չելսովի յարգողների մէջ, ինչպէս հաղորդում են մայ-րաքաղաքի լրագիրները, միտք է ծագել թոյլ-տուութիւն ստանալ կառավարութիւնից և ստո-րագրութիւն բանալ ամբողջ Ռուսաստանում՝ կամաւոր նուէրներ հաւաքելու: Չելսովին հա-մազգային մի նուէր տալու նպատակով, ինչ-պէս վարուցեցին լեհացիները Սենկեվիչի վերա-բերմամբ:

ՂԱՉԱԽԻՑ մեզ գրում են. «Այսօր, ապրիլի 26-ին, սալով Ղազախ բերին յայտնի աւազակ Հասերի դիակը Շամշադինց, սա յայտնի էր ամբողջ Ղազախում իր ոճրադրութիւն-ներով: Անցեալ տարի Ուզուն-թալա գիւղի սարում մի ուս ստրամբիկ անյայտացաւ անցաւ մի տարի, և նրանից ոչ մի հետք չե-րեաց, բայց երբ որ սպանված աւազակի դիակը քաղաք բերին, ստրամբիկի կինը մօտեցաւ դիակին և ցոյց տուեց մատով կոչիկները բարձ-րաձայն գոռալով. «Մա է իմ մարդուս սպա-նողը, ահա իմ մարդուս իւխտի կոչիկները»: Ներկայ եղողներն ամենքն էլ ցնցվեցին: Ասում են որ այս չարագործ Հասերը սպանել է երկու հայ աղերանց՝ Կարմիր-աղբեր-բերանը: Աւա-զակին էլ սպանել են Բերդիի հայ տղերք, որոնց զաւառապետ պ. Արնօլը ստրամբիկութիւն է տուել:

ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ գրում են. «Անցեալ օրը երկու թուրք կուէրու ժամանակ հարևանի մի ծեր կին Մադիսա Խիլիկ-կըզի, ընկնում է կրու-ւողների մէջ արգելք հանդիսանալու. կուողներից մէկի հրացանը արգելքով տեղն ու տեղը սպանեց խեղճ կնոջ: Այսօր էլ երկու եղբայրներ՝ Մուսէս ու Բալլո Ղուչչեանների, կուէրու ժամանակ, Բալլոյ յղի 20 տարեկան կինը ընկնում է կուող եղբայրների մէջ ար-գելքով, սակայն նոյն րօպէին խեղճ փոքրիկ դստակի հարուած ստանալով արիւնաթաթախ ընկնում է գետին: Վերաւորեալ աղբերները դուրս էին թափվել, և նոյն գիշերը մահացած տղայ վիժեց, օրից երեաց, որ դստակի ծայրը վի-րաւորել է մօր զաւակաւոր մէջ՝ երեխային էլ՝ վզիցը: Վերաւորը տառաջիկ ցուցման ժամանակ տանաւորին ասաց. «Բնձ խիղջ տեղուս էր», իսկ քննչին ասաց, որ ես դստակ տեսաւ ա-մուսնուս ձեռքին, բայց չը գիտեմ ով ինձ սպանեց: Ինչպէս ասում են՝ կուէրու պատճառը հարսի սկեսուրն է, որը հարսներին շաւն օրում է պահում: Չոհը դեռ տանվում է սոսկալի ցաւերից»:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Վան, ապրիլի 5-ին
Ժամանակէ մը ի վեր կրթական խնդիրնե-րու շարք մը կը զբաղեցնէ մեր ազգային ա-ռաջնորդարանը և հասարակութեան էտանի-թանս դատու միտքն: Ամենէն ուշագրաւը Վա-րագալ հոգակաւոր միջնորդութիւն մէջ բացուե-լիք Ժառանգաւորաց վարժարանի—ընծայարա-նի խնդիրն է:

Վարագալ վանքը 1896-ի աղէտալի դէպքե-րէն ի վեր մինչև այսօր ալ թէն պատուարած է 50—100-ի մօտ որբեր թէ վանքի և թէ հե-ռուոր բարերարներու ընձեռած միջոցներով տարաբախտաբար չէ կրցեր հիմնաւոր արդիւն-քի մը հասնել, որ համապատասխանէր իր ա-ւանդական համբաւին, անցեալ հոյակապ վի-ճակին: Ընդհակառակն վերջին մէկ քանի տա-րիներուն մէջ երկպառակութիւններու երեսնէ վանքն ու որբանոցը անխնամ վիճակի մատ-նուել է և չարալար տուժել է վերջ հազիւ ու-րեմն խեղբէ եկած՝ ջանքեր կը թափուին կո-րուստները դարմանելու, թէն արդէն ուշ: Ժողովրդած ընծայարանով մը, կից երկրագոր-ծական դասընթացքի, օժանդակութեամբ Կար-մուրի վանքի (Վարագէն 3/4 ժամ միայն հե-ռու) իսկապէս օրհնաբեր հաստատութիւն մը, որ տար հայ կեանքին մօտէն ծանօթ մը թշուառ եղբայրներու՝ լինի քաղաքացի թէ

15-2